ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

<<Սիսիանի ավագ դպրոց>> ՊՈԱԿ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման**՝ ՏՀՏ-ի կիրառումը որպես բարձր ներգրավվածությունը ապահովելու միջոց ռուսաց լեզվի դասաժամերին

**Հետազոտող ուսուցիչ**՝ Անյա Ազիզյան

Սյունիքի մարզ, ք. Սիսիան , Ծղուկի միջնակարգ դպրոց

**Վերապատրաստող ուսուցիչ**՝ Լիլիաննա Սահակյան

Սիսիան-2022

# Բովանդակություն

Ներածություն……………………………………………………………………...3

Գրականության ակնարկ ……………………………………………………...5

Փորձարարական դաս 1………………………………………………………..12

Փորձարարական դաս 2………………………………………………………..17

Եզրակացություն…………………………………………………………………..23

Գրականության ցանկ……………………………………………………….25

# Ներածություն

<<Ռուսաց լեզուն հմուտ ձեռքերում<br>
և փորձառու շրթունքներում<br>
գեղեցիկ է, մեղեդային, արտահայտիչ,<br>
ճկուն, հնազանդ, ճարպիկ<br>
և տարողունակ >>:<br>
Ա. Ի.Կուպրին

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում,դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ճանաչողական և ինքնուրույն որոշումներ կայացնելու ձևավորումն ու զարգացումը:Այստեղ իր մեծ դերն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաները:Ծանոթանալով տեղեկատվական տեխնոլոգիաներին, ինձ հետաքրքրեց՝ արդյոք դա կապված է իմ առարկայի դասավանդման գործում:

Ներկայիս զարգացող և հարափոփոխ աշխարհում օտար լեզու, մասնավորապես ռուսացլեզու սովորելն անհրաժեշտություն է ցանկացած մասնագիտության ոլորտում: Սակայն,ինչպես յուրաքանչյուր օտար լեզու, այնպես էլ ռուսաց լեզու ուսանելիս սովորողները՝պայմանավորված իրենց տարիքային առանձնահատկություններով, լեզվի իմացության աստիճանով և այլ բնորոշ չափանիշներով, կատարում են սխալներ, որոնք օտար լեզվի ուսուցման անբաժան տարրերն են:

Առաջին. սխալները կարևոր են նախ և առաջ ուսուցչի համար, քանզի դրանց օգնությամբ հնարավոր է դառնում արձանագրել մատուցվող նյութի յուրացվածության աստիճանը:

Երկրորդ սխալները կարևոր են հենց սովորողների համար, քանի որ դրանք մեծ մասամբ կատարվում են այն ժամանակ, երբ սովորողները փորձում են հարստացնել, կատարելագործել և բարելավել իրենց խոսքը

Ուսումնասիրելով մեթոդական գրականությունը՝ նկատում ենք, որ հայ, ռուս և արևմտյան մանկավարժ-մեթոդիստները սովորողների կողմից կատարվող սխալներ հասկացությանը համարժեք օգտագործում են նաև լեզվական ինտերֆերենցիա եզրույթը:Նրանց աշխատություններում լեզվական ինտերֆերենցիա հասկացությունը բնութագրվում է

որպես սովորողի կատարած սխալ, որը մայրենի, նախկինում յուրացված կամ ուսուցանվող օտար լեզվի լեզվական նորմերի ոչ լիարժեք յուրացվածության արդյունք է: Ռուսաց լեզու ուսուցանելիս մենք բախվում ենք հետևյալ խնդրին՝ միջին դասարաններում (6-րդ) սովորողներն իրենց մայրենի լեզվում դեռևս չեն
ուսումնասիրում հոլովները:

Գլխավոր նպատակ՝ կիրառելով ՏՀՏ մեթոդները փորձել սովորողներին ծանոթացնել հոլով հասկացության հետ, վերլուծել հոլովների անունները նախ իրենց մայրենի լեզվով, այնուհետև ռուսաց լեզվով: Վեր հանել դրանց կիրառման առանձնահատկությունները բանավոր և գրավոր խոսքում, սովորեցնել կատարել միջլեզվական համեմատություններ և ՏՀՏ միջոցով ապահովելբարձր արդյունավետություն դասապրոցեսում:

## Գրականության ակնարկ

Մեր օրերում ամենաարժեքավոր ռեսուրսը տեղեկատվությունն է, իսկ ամենաանփոխարինելին՝ ժամանակը, որը ժամանակակից մարդուն խիստ պակասում է: Իհարկե, կյանքի բարձր տեմպը հսկայական ազդեցություն ունի մատաղ սերնդի դաստիարակության և կրթության վրա: Ժամանակակից ուսուցիչը պետք է հստակ հասկանա, որ երեխաները, որոնց ինքը պատրաստվում է սովորեցնել, ծնվել և դպրոց են եկել արդեն 21-րդ դարում, ինչը նշանակում է, որ նրանք մեծացել և ձևավորվել են բոլորովին այլ տեղեկատվական տարածքում և հասկանալի է, որ համակարգիչը դառնում է սիրված ժամանց, դպրոցականի կյանքի անբաժանելի հատկություն, իսկ երբեմն էլ, ցավոք, լավագույն ընկեր:

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Այս աշխատանքում ցանկանում եմ անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը:

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրունության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է օտար լեզվի դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ սովորողների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

• դասի տիպից ու կառուցվածքից,

• ուսումնական նյութի բովանդակությունից,

• սովորողների տարիքից,

• դասարանում սովորողների թվաքանակից,

• պատրաստվածության մակարդակից,

• ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,

• շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,

• ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը:

Համագործակցային ուսուցման տարրերը

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային աշխատանքի առավելությունները:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

Համագործակցային ուսուցման իմաստն է՝ Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:

• Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Կարևոր է կատարել ճիշտ դերաբաշխում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացնում ենք այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում սովորողները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր սովորողի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է սովորողի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Փոքր դպրոցներում խմբային աշխատանքը վերածվում է անհատական աշխատանքի, քանի որ աշակերտների թիվը քիչ է յուրաքանչյուր դասարանում:

ՏՀՏ գործիքների միջոցով համագործակցային ուսուցումը ունի հետևյալ նպատակները

• ձևավորում է հաղորդակցման հմտություն,

• սովորողները սովորում են միմյանցից,

• զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,

• միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,

• խթանում է թիմային աշխատանքը,

• ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,

• քննարկումների միջոցով ամրապնդվում է սովորողների համոզմունքները,

• ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Ինչպիսի առաջադրանքներ որոշել նպատակին հասնելու համար.

● գիտելիքների, համագործակցության և հաղորդակցության, խնդիրների լուծման և ինքնակազմակերպման, արտացոլման և արժեքային-իմաստային կողմնորոշումների անկախ ձեռքբերման և փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացում.

● ուսանողների ՏՀՏ կարողությունների ձևավորում և գնահատում;

● ուսուցիչների ՏՀՏ կարողությունների և մեթոդական վերապատրաստման կատարելագործում;

● ուսումնական գործընթացում ՏՀՏ օգտագործման տեխնոլոգիաների կատարելագործում;

● ինտերնետային ռեսուրսների ծրագրային և մեթոդաբանական նյութերի համակարգում և դրանց համաժամացում ռուսաց լեզվի դպրոցի հիմնական դասընթացների հետ;

● նոր համակարգչային ծրագրային արտադրանքի ստեղծում;

● դպրոցի ընդգրկումը համառուսական կրթական միջավայրում ՝ դպրոցի փորձի ընդհանրացման և տարածման միջոցով:

Հայտարարված թեմայի շուրջ աշխատանքի այս փուլում ես ելնում եմ մեր դպրոցի նյութատեխնիկական սարքավորումներից: Այսօր մեր դպրոցն ունի դասարան, որը լիովին հագեցած է նորագույն տեխնիկական միջոցներով ՝ ինտերնետ մուտք գործելու հնարավորությամբ: Միջին մակարդակի աշակերտները յուրաքանչյուր դասարանից հնարավորություն ունեն մուտք գործել դպրոցի տեղական ցանց, ինտերնետ: Առկա ներուժը սկսել է օգտագործվել ուսումնական գործընթացում:

Այն հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից: Աշխատանքային ռեժիմն օրվա մեջ լինում է ազատ:

Հաղորդակցումը կատարվում է առցանց: Այս ՏՀՏ ռեսուրսները ուսուցչին հնարավորություն են տալիս անարգել իրականացնել անհատական և համագործակցային խմբային աշխատանքներ տանը և դասաժամերին դասարանում՝ (համապատասխան հագեցվածության պարագայում) տալով անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային
խմբերը չեն խանգարում իրար:

Ուսումնասիրելով էլեկտրոնային հետևյալ հարթակները՝ համոզվեցի,որ հնարավորություն կա սովորողներին ավելի ներգրավելու դասապրոցեսին :

Էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Հատկապես այս պարագայում է լիարժեք իրականանում դասավանդման մեթոդիկայի հին, բայց ժամանակով ստուգված սկզբունքը. լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել: Ուսումնական նյութի մատուցման ժամանակ մեծ նշանակություն ունի իրական օբյեկտների մոդելների ստեղծումը, որի շնորհիվ հնարավոր է ներթափանցել օբյեկտի մանրամասն կառուցվածքի մեջ, ընկալել իրականացող գործընթացների էությունը, բացահայտել ներքին օրինաչափությունները:

ՏՀՏ-ները դասավանդողի և սովորողի փոխազդեցությունը դարձնում են օպերատիվ, արդյունավետ, հարմար և հոգեբանորեն մատչելի:

Google Classroom- ը ուսումնական գործընթացը կազմակերպելու և կառավարելու հարթակ է: Այն թույլ է տալիս արդյունավետ իրականացնել սովորողների և ուսուցիչների համատեղ համագործակցությունը առցանց միջավայրում:

Google Classroom- ը թույլ է տալիս դպրոցներին և ուսուցիչներին ստեղծել վիրտուալ դասարաններ՝ դասի մասնակիցների հետ անվտանգ միջավայրում հաղորդակցվելու համար: Google Classroom հարթակում կարելի է իրականացնել նաև հեռավար համաժամանակյա դասընթացներ Google Meet գործիքի միջոցով:

ՏՀՏ ռուսաց լեզվի դասընթացում:

Ռուսաց լեզվի ժամանակակից ուսուցչին հասանելի ՏՀՏ-ի ի՞նչ տեխնոլոգիաներ են օգնում ավելի արդյունավետ դարձնել երեխաների ուսուցման և դաստիարակությանգործընթացը: Առաջինն է հեռահաղորդակցման տեխնոլոգիա -

տեխնիկայի, մեթոդների, մշակման, տեղեկատվության փոխանակման, փոխադրման, տեղեկատվության ցանկացած ձևով ներկայացված (խորհրդանշական, տեքստային, գրաֆիկական, աուդիո-վիդեո տեղեկատվության) հեռարձակման մի շարք, օգտագործելով օգտվողների տեղեկատվական փոխազդեցությունը:

Երկրորդ ՝ համակարգչային արտացոլման տեխնոլոգիա ուսումնական տեղեկատվություն ուսումնասիրված օբյեկտի մասին:

Երրորդ, ինտերակտիվ երկխոսության տեխնոլոգիա...

Սա օգտագործողի փոխազդեցությունն է ծրագրային համակարգի հետ, որը բնութագրվում է (ի տարբերություն երկխոսության, որը ենթադրում է տեքստի հրամանների, հարցումների և  պատասխանների, հրավերների փոխանակում) երկխոսության առավել առաջադեմ միջոցների իրականացման միջոցով: Սա ապահովում է բովանդակության ընտրանքներ ընտրելու հնարավորությունը ուսումնական նյութ, դրա հետ աշխատանքի ռեժիմը:

Օգտատիրոջ և ծրագրային համակարգի փոխգործակցության ինտերակտիվ ռեժիմը բնութագրվում է նրանով, որ նրա յուրաքանչյուր խնդրանքն առաջացնում է համակարգի արձագանք և, ընդհակառակը, վերջինիս կրկնօրինակը պահանջում է օգտագործողի պատասխան: Ցանցում հայտնվել են իսկայական թվով էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, լայն համակարգ: Այս ՏՀՏ տեխնոլոգիան հիանալի գործիք է բազմամակարդակ ուսուցման տեխնոլոգիա իրականացնելու համար: Ուսուցիչը հնարավորություն ունի օգնելու թույլերին, ուշադրություն դարձնել ուժեղներին, իրականանում է ուժեղ աշակերտների կրթության մեջ ավելի արագ և խորը խորանալու ցանկությունը:Նոր նյութի բացատրության կամ կրկնության դասերի բազմազանացումը թույլ է տալիս հիպերտեքստի հետ աշխատելու տեխնոլոգիա... Սա տեղեկատվության մշակման տեխնոլոգիա է, որն ունի տվյալների կազմակերպման մեթոդ, որը բնութագրվում է հետևյալով. Պարզ տեքստի (առարկաների) հատվածներ հնարավոր նկարազարդումներով տեղադրվում են հիերարխիկ տվյալների շտեմարանում. անվանված կապերը հաստատվում են ցուցիչների առարկաների միջև; տեքստի մի կտոր տեղադրվում է համակարգչի էկրանին, որտեղ առարկան համապատասխանում է տեսողական նշանին, որը կարող է լինել տեքստում հատուկ ընդգծված բառեր և պատուհաններ, որոնք պարունակում են այս օբյեկտի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կամ դրա մի մասը: Այս տեղեկատվությունն իր հերթին կարող է պարունակել տեքստ, որը պարունակում է որոշակի

օբյեկտների հետ կապված բառեր և այլ օբյեկտների ցուցիչներ: Գերազանց կրթական նյութը ներկայացված է «Թվային կրթական ռեսուրսների մեկ հավաքածու» պորտալում, որտեղ յուրաքանչյուր թեմա ունի հիպերտեքստային սահմանումներ, ինտերակտիվ աղյուսակներ և գծապատկերներ: Այս տեխնոլոգիան թույլ է տալիս լիովին իրականացնել տեսանելիության և հետևողականության ընդհանուր դիդակտիկ սկզբունքները, ինչպես նաև սերտ կապ հաստատել նախորդ ուսումնական նյութի և ենթահաշվային կապերի հետ: Իհարկե, մեր առջև ՏՀՏ տեխնոլոգիաների մի ամբողջ ցուցակ չկա, բայց դա բավական է գիտակցելու համար, թե որքան մեծ է նրանց դրական դերը ժամանակակից կրթության ոլորտում:

https://monster-evo.ru/hy/belinskijj/chto-takoe-ikt-v-obrazovanii-vidy-sovremennyh-informacionno-kommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/?fbclid=IwAR2NiH2nRh6nCIMj9bs2h
https://monster-evo.ru/hy/belinskijj/sovremennye-ikt-v-obrazovanii-informacionno-kommunikacionnye-tehnologii-v/

Փորձարարական դաս 1

Тема - планирование урока

Имя учителя: А. Азизян

9-ой класс: А.С. Пушкин «Зимний вечер».

Предмет: русский язык

Продолжительность урока: 45 минут

Цель урока:

- добиваться понимания смысла стихотворения и настроения лирического героя

Задачи:

Образовательные:

- продолжить знакомство учеников с творчеством писателя;
- познакомить с некоторыми фактами биографии Пушкина, стихотворениями, посвященными няне поэта;
- показать своеобразие пейзажной лирики А.С. Пушкина и мастерство поэта в создании картин зимнего пейзажа;

Развивающие:

- содействовать развитию мышления, самостоятельности, наблюдательности, навыков самоконтроля и самооценки;
- развитие умения сравнивать, анализировать и обобщать информацию, делать выводы;
- развивать познавательные интересы детей;
- отрабатывать навык выразительного чтения лирического текста;

Воспитательные

- формировать представления учащихся о роли бабушки и няни как носительниц родовых традиций, культуры и нравственных представлений народа;
- воспитание любви и уважения к людям старшего возраста;
- воспитывать ответственность за выполненную работу.

В конце урока ученик должен:

Знать:

- понимать смысл стихотворения;
- понимать настроение лирического героя.

Уметь:

- сравнивать, анализировать и обобщать информацию, делать выводы.

Владеть: - навыкам выразительного чтения лирического текста;

Оборудование:

компьютер, презентация, иллюстративный материал, учебники русского языка, раздаточный материал.

Методы и приемы:

- методы словесной передачи информации и слухового восприятия (приемы: информационный рассказ, беседа);
- методы передачи информации с помощью практической деятельности учащихся (выполнение практической работы);
- методы наглядной передачи информации и зрительное восприятие (приемы: показ компьютерной презентации);
- методика концентрации внимания (игра «Угадай-ка!»)

Ход урока:

Организационный момент: (1 минута) подготовить обучающихся к работе на уроке.

Проверка домашнего задания: (5 минут)

Открытие новой темы: (30 минут)

Слушать: Зимний вечер

Смотреть: Стихотворение по отрывкам (learningapps)

Показ презентации:Анализ стихотворения

Работа в парах:







Загадки для кроссворда:

1. «Дурачина ты, ________!

Не умел ты взять выкупа с рыбки!

Хоть бы взял ты с нее корыто,

Наше-то совсем раскололось» (Простофиля)

Этап осмысления: а) Знакомство с произведением

б) Словарная работа

в)беседа по содержанию стихотворения.

Работа в парах

У: – Озаглавьте каждую часть строками из стихотворения и распределите иллюстрации.



1. Буря.

2. Ветхая лачужка.

3. Спой мне песню.

4. Сердцу будет веселей.

Edpuzzle

Рефлексия урока:

- Какие сказки Пушкина вы читали?

- Какие стихи Пушкина вы знаете?

Оценивание:

-Учащийся умеет построить связное, логически последовательное высказывание по

теме ,,Зимний вечер”

Умеет:

- выразительно читать произведение.

-понимать значение данных слов.

Буря- ненастье с сильным разрушающим ветром.

Мгла - это сырой, холодный туман, непрозрачный воздух от тьмы, сумерек.

Вихрь – порывистое, круговое движение ветра.

| | |
|---|---|
| Кровля | старая разрушающаяся крыша |
| Кроет | покрывает |
| Лачужка | небольшая, старенькая избушка |
| Веретено | приспособление для ручного прядения пряжи |

Обобщение:

Учитель. В стихотворении « Зимний вечер» поэт подчеркивает поэзию обычной жизни.

Для него поэтична обычная северная природа, поэтичен крестьянский быт, его привлекают народное творчество, речь простого народа. Поэтому и в стихотворении

«Зимний вечер» поэт употребляет простонародные слова и выражения.

Домашнее задание: выучить наизусть отрывок из стихотворения,выполнение

Упр 8., стр.88.

Փորձարարական դաս 2

Тема - планирование урока

Имя учителя: А. Азизян

3-ий класс: ,,Заяц Коська и родничок” (по сказке А. Грибачева).

Предмет: русский язык

Продолжительность урока: 45 минут

Цель урока:

-формирование эмоционально-

волевой сферы детей.

Задачи:

Знакомить обучающихся со свойствами воды через «путешествие» по тексту А. Грибачева.

Развивать моторику и координации движений.

Развивать произвольное внимание через упражнения на наблюдения, умения максимально концентрироваться над происходящим.

Образовательные:

-раскрыть идею

-формировать умение понимать авторский замысел

-формировать выразительность и осознанность чтения

Развивающие:

-развивать: речь, внимание

-умение анализировать, выделять главное и существенное, сравнивать

Воспитательные

Воспитывать умение слушать и слышать товарищей

-любовь к слову

-Воспитывать дружелюбное отношение к окружающим.

В конце урока ученик должен:

Знать: содержание текста

Уметь: развивать связную речь при ответах на вопросы, умения свободно и ясно выражать свои мысли.

Владеть: навыками чтения

Оборудование:

предметные картинки или слайды из презентации к уроку, учебники

Ход урока:

Организационный момент: (1 минута) подготовить обучающихся к работе на уроке.(Сегодня у нас необычное занятие - мы отправимся в сказку, где речь пойдет

о воде.)

Проверка домашнего задания (5минут)

Открытие новой темы:(30 минут)

Вступление.

У. Давайте вспомним то, что мы знаем о воде.

Какая бывает вода?

Д. Холодная, теплая, жидкая, текучая, прозрачная, шелковистая, бархатистая, освежающая, свежая, чистая, мутная, грязная..

У. А бывает твердая вода? Когда такое случается?

Д.Когда вода замерзает, превращается в снег, лед, град.

У. Бывает ли вода легче воздуха? Когда?

Д.Когда вода испаряется, то превращается в пар, туман, облака.

У.Где вода встречается в природе?

Д.В реке, озере...звук воды

Этап осмысления: а) Знакомство с произведением

б) Словарная работа

в)беседа по содержанию

Рефлексия урока:— Вы устали? Вам трудно было? Что вам больше всего понравилось?

Оценивание:

-Учащийся умеет построить связное, логически последовательное высказывание

по

теме

Умеет:

- читать произведение.

-понимать значение данных слов.

родничок- (источник, ключ)

дупло- пустота в стволе дерева.

-облако-Скопление сгустившихся водяных паров в воздухе.

-шкурка- оболочка, кожица

Ответить на вопросы:

Что хотел знать Коська?

Кого заяц Коська встретил в лесу?

Обобщение: Сказка закончилась. Давайте припомним все превращения и изменения Родничка и назовем их.

Дети по очереди рассказывают о превращениях Родничка. (Сначала Родничок превратился в ручей. Потом он стал рекой. Затем Родничок поднялся вверх и превратился в облачко. Из облачка Родничок выпал на землю дождем. Зимой

Родничок стал снегом.)

Заяц Коська (Презентация)

Edpuzzle

Домашнее задание: рассказывать сказку, упр 30. , стр 13.

## Փորձարարական դաս 1-ի վերլուծություն

Առարկա՝ Ռուսաց լեզու

Դասարան՝ 3-րդ

Դասի թեման՝ А.С.Пушкин ,,Зимний вечер"

Դասարանը բաղկացած է 3 աշակերտներից : Հենց դասապրոցեսի սկզբին աշակերտները ծանոթացան դասի նպատակներին ու վերջնարդյունքներին:

Ամբողջ ընթացքը կազմակերպվեց հարց ու պատասխանի , քննարկումների, առային աշխատանքի օգնությամբ :

Դասի նպատակներն էին՝

-ՏՀՏ կիրառում նոր նյութի մատուցման ժամանակ, ուսման արդյունաետությունը բարձրացնելու նպատակով:

-աշակերտների ինքնուրույն, ստեղծագործական կարողությունների զարգացում

-տեղեկատվությունը համեմատելու, վերլուծելու և ընդհանրացնելու, եզրակացություններ անելու ունակության զարգացում.

Ես կարծում եմ, որ աշակերտները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով (ուսուցչի հաղորդումից, դասագրքից) այլ ինքնուրույնաբար, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում, ինչը աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում, դրական վերաբերմունք ձևավորում ուսման նկատմամբ, նպաստում դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը: Այս ամենը իրագործելու համար ես որոշեցի կիրառել որոշ ՏՀՏ գործիքներ:Դրանց միջոցով նրանք ծանոթացան Ա. Ս. Պուշկինի ,,Зимний вечер" բանաստեղծությանը:Արտահայտիչ խոսք ձևավորելու նպատակով ցուցադրվեց տեսահոլովակ, որտեղ ընթերցվում էր բանաստեղծությունը: Այնուհետև կազմակերպվեց

խմբային աշխատանք (learningapps) գործիքի միջոցով: Ցուցադրվեց սահիկաշար, որտեղ ներկայցվում էր բանաստեղծության վերլուծությունը: Մի քանի խմբային աշխատանքների միջոցով ամրապնդվեց նոր նյութը:

Դիտել նկար

Այս նյութը ( ստեղծագործությունը ) ես առաջին անգամ էի կիրառում ՏՀՏ միջոցներով: Կարծում եմ, որ այն բավականին արդյունավետ էր: Սովորողները ցուցաբերեցին բարձր ակտիվություն: Ես այս դասն անց եմ կացրել բջջային հեռախոսների միջոցով, կազմակերպվել են խմբային աշխատանքներ, որից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացրել է իր արդյունքները: ՏՀՏ -ի միջոցով ես կարողացա հասնել իմ առջև դրված նպատակներին,սակայն հաջորդ փորձարարական դասը կանցկացնեմ ՏՀՏ կարգավորում ունեցող դասասենյակում և ուրիշ խմբի աշակերտների հետ: Կարծում եմ ես կունենամ այլ արդյունք:

## Փորձարարական դաս 2-ի վերլուծություն

Դասարանը բաղկացած է 3 աշակերտներից : Դասի սկզբին աշակերտները ծանոթացան դասի նպատակներին և վերջնարդյունքներին :

Դասի նպատակը՝

-ՏՀՏ կիրառման միջոցով երեխաների հուզական և կամային ոլորտի ձևավորում:

- Դիտողական վարժությունների միջոցով մշակել կամավոր ուշադրություն, հնարավորինս կենտրոնանալու ունակություն Տվյալ դասն արդյունավետ իրականցնելու համար ես կիրառեցի աշակերտակենտրոն մեթոդներ ու մոտեցումներ (համագործակցային/ ինտերակտիվ, թիմային, անհատական և այլն):

Ցուցադրվեց մի նկար, որտեղ պատկերված էր բնության մեջ ջրի փոփոխությունները:

Edpuzzle գործիքի միջոցով պատրաստված նյութի շնորհիվ նրանք ցանոթացան հեքիաթի գլխավոր հերոսների հետ:

Սահիկաշարի միջոցով մատուցվեց նոր նյութը:

Ուսուցման այս ձևը նրանց համար շատ հետաքրքիր էր:

Իմ կարծիքով դասն անցավ ըստ պլանավորածի,սակայն ինձ թվում է , որ եթե լինեին ավելի շատ թվով աշակերտներ ՝ դասն ավելի հետաքրքիր և արդյունավետ կլիներ:

Դասերի ժամանակ կիրառված մեթոդների և ՏՀՏ գործիքների դրական և բացասական կողմերը

| **Դրական** | **Բացասական** |
|---|---|
| Նորարարական տեխնոլոգիաների միջոցով ընդլայնվեց աշակերտների հետաքրքրությունն ու ներգրավվածությունը դասին: ՏՀՏ-ի կիրառությունը ոգևորություն մտցրեց աշակերտների մեջ: | Չպահպանելով համակարգչային հիգիենան վնասվում է սովորողի առողջությունը: Թույլ չի տալիս աշակերտներին  օգտվել դասագրքից: 18 |
| Աշակերտներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին դասապրոցեսին: ՏՀՏ գործիքների միջոցով անգլերենի  մատուցվող նյութը դարձավ ավելի դյուրին: | Սահմանափակում է աշակերտների ինքնուրույն մտածելու կարողությունը: |
| Աշակերտները ցանկություն հայտնեցին այսպիսի դասեր հաճախ կազմակերպել: | |

# Եզրակացություն

Իմ կարծիքով տհտ կիրառումը ուսուցման պրոցեսում նպաստեց ուսման որակի բարձրացմանը և նկատվեց հետաքրքրության աճ առարկայի նկատմամբ: Ինչպես նաև նպաստեց նրանց մոտիվացիայի բարձրացմանը, ինքնուրույնության ձևավորմանը:

ՏՀՏ հնարավորություն տվեց ինձ հրաժարվել ավանդական ուսուցման բնորոշ դասավանդման գործունեության սովորական տեսակներից ՝ հնարավորություն տալով օգտագործել աշխատանքի ինտելեկտուալ ձևեր ՝ ազատելով կրթական նյութի զգալի մասի ներկայացումից և դրա հետ կապված սովորական գործողություններից:

Ես իմ առջև նպատակ էի դրել ՏՀՏ միջոցով՝

- ստեղծել նոր պայմաններ լեզվի իմացության զարգացման համար

-ստեղծել պայմաններ խոսքի իրավասության զարգացման համար

-ՏՀՏ միջոցով կատարելագործել սովորողի հետ խոսելու, լսելու, կարդալու, գրելու հմտություններ:

ՏՀՏ -ի հետ աշխատանքը սկսվեց ցուցադրման մեթոդի կիրառմամբ: Ես կարողացա ուսումնասիրվող նյութերը դարձնելտեսողական: Փորձարարական դասերն անցկացնելուց հետո ես համոզվեցի, որ ՏՀՏ նորարականդասերն ունենում են ավելի լավ արդյունք քան դասի ավանդական ձևերը: Կարևորն այնէ, որ կարողացա գտնել այն սահմանը, որը դասը դարձրեց ավելի ճանաչողական և տեսանելի:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս իրականացնել իմ ծրագիրը, դասը դարձնել ժամանակակից: Ես ընդամենը երեք ՏՀՏ դաս եմ անցկացրել ,բայց համոզվեցի որ համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում ազդում է ուսուցչի մասնագիտական կարողությունների աճի վրա:

Վերլուծելով դասարանում ՏՀՏ օգտագործման փորձը, կարող եմ վստահորեն ասել, որ սա թույլ է տալիս.

• ապահովել ուսուցման դրական մոտիվացիա;

• դասերը վարել գեղագիտական և զգացմունքային բարձր մակարդակով (երաժշտություն, անիմացիա)

• բարելավել գիտելիքների վերահսկողությունը

• ռացիոնալ կազմակերպել ուսումնական գործընթացը, բարձրացնել դասի

արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերը նշված բոլորը հանգամանքները , անհրաժեշտ եմ համարում կիրառել դասավանդման ՏՀՏ մեթոդներըուսաց լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

# Գրականության ցանկ

1. .https://monster-evo.ru/hy/belinskijj/chto-takoe-ikt-v-obrazovanii-vidy-sovremennyh-inf
ormacionno-kommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/?fbclid=IwAR2NiH2nRh6nCIMj9bs2h
2. https://monster-evo.ru/hy/belinskijj/sovremennye-ikt-v-obrazovanii-informacionno-kom
munikacionnye-tehnologii-v
3. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ՀԵՏԱԶՈՏՈւԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ», 2011 Թ.